

Այունյաց երկիր

Ուրբաթ
31 Հունվարի 2014 թ. №2 (310)

www.syuniacyerkir.am

À ³ Ýõñ³ ÝáõÙ ¿
ÙáõÃÁ ÓáñáõÙ«
ØáõÃÇ í ñ³ ÙáõÃ ¿
Í áñáõÙ£

ՀԱՍՈՒՍԱՅԱՆ

Ճակատեն. հարցերի հարցը խմելու ջուրն է

Վ ՊáõÕ³ á ³ Ñá ³ ÝáõÃÙáõÝ

Սյունիքի մարզի գյուղական համայնքներից առավել վատթար վիճակում են Կապանի տարածաշրջանի գյուղերը: Գրանցից մի քանիսը, որոնց գոյատևման զարկերակը խորհրդային տարիներին փոքրիշատե համաչափ էր բաբախում, սրընթացորեն սկսել են դատարկվել: Անցյալ դարի 50-70-ական թվականներին պղնձահանքային արդյունաբերությունում աշխատում էր կարիք կար: Գյուղաբնակ տղամարդիկ նախապատվությունը տալիս էին հանքագործությանը՝ հողի վրա աշխատելու փոխարեն: Իսկ 1990-ականներից հետո, երբ գործարան-ֆաբրիկաները փակեցին իրենց դռները, կամ գործեցին իրենց հզորությունների չնչին մասով, շատերը բռնեցին արտագաղթի ճամփան՝ հոգալու ընտանիքի հոգը, թեպետ գյուղաբնակի համար հողն ինքնին աշխատատեղ է: Մեր օրերում դատարկվող համայնքներից մեկը ճակատենն է՝ մարզկենտրոնից 10 կիլոմետր հեռավորության վրա գտնվող:

1830-ական թվականների ներգաղթից հետո գյուղում աստիճանաբար ընդլայնվել է: Ըստ մարդահամարների՝ համայնքում 1831 թվականին բնակվել է 78 բնակիչ, 1873-ին՝ 183, 1886-ին՝ 351, 1908-ին՝ 509, 1914-ին՝ 290, 1919-ին՝ 760, 1922-ին՝ 648, 1926-ին՝ 641, 1931-ին՝ 745, 1939-ին՝ 596, 1959-ին՝ 249, 1970-ին՝ 231, 1979-ին՝ 188, այսօրվա դրությամբ՝ 104 մարդ:

Այժմ համայնքի ժողովրդագրությունը տխուր պատկեր է ներկայացնում, որի մասին կխոսենք ստորև: Խորհրդային տարիներին գյուղում գործում էր «Աշխատանք» կոլտնտեսությունը, որի առաջատար ճյուղերն էին անասնապահությունը, հացահատիկի, ծխախոտի արտադրությունը, ավելի վաղ՝ շերամապահությունը:

Երկրորդ աշխարհամարտին մասնակցել է 152 ճակատենցի, զոհվել կամ անհետ կորել է 77-ը: Նրանց հիշատակը հավերժացվել է հուշարձանով, որը կառուցվել է 1967 թվականին համագյուղացիների հանգանակության շնորհիվ: Վերջին ժամանակներս թանգարանի վերածված այդ հուշակոթողը հիմնամորթով է: Գյուղի կենտրոնում կյանքի է կոչվել մի համալիր, որն իր մեջ ամփոփում է Արցախյան ազատամարտում զոհված համագյուղացիների հիշատակը հավերժացնող հուշաքարը եւ կոթողը:

Ճակատենում 2013-ի դեկտեմբերի 8-ին տեղի է ունեցել համայնքի ղեկավարի ընտրություն, անկուսակցական Անդրյուշա Դավթյանը յոթ ձայնով առաջ է անցել գործող գյուղապետ Արծրունի Հարությունյանից (Հայաստանի հանրապետական կուսակցություն): Նոր գյուղապետը պաշտոնը ստանձնելու է փետրվարի 18-ին: Գյուղամիջում հանդիպեցինք առաջմ գործող ու նորընտիր գյուղապետերին, եւ գրույք ծավալվեց համայնքի հիմնախնդիրների, դրանց լուծման ուղիների շուրջ: Նախ տեղեկացանք, որ համայնքի բյուջեն 5,1 մլն է, որից 700 հազարն է կազմում սեփական եկամուտը (հողի հարկ եւ գույքահարկ): Արծրունի Հարությունյանը գյուղը ղեկավարել է 2008-ից, նրան ավելի տեսանելի են հիմնախնդիրները եւ նախ ներկայացնում է սրընթացորեն դատարկվող գյուղի պատկերը: Մահացությունը, բնակամահացումները, ծնունդների քանակը ընդհանուր առմամբ կրճատվել են:



Մի՞թե Սյունիքով է անցնում թմրամիջոցների առեւտրի միջազգային ճանապարհը

Վ ² õí ² èàò

Ինչպես հունվարի 18-ին հաղորդել է ՀՀ ԱԱ ծառայության մամուլի կենտրոնը՝ «Ի շնորհիվ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության աշխատակիցների արհեստավար գործողությունների, ս.թ. հունվարի 17-ին Մեղրու մաքսատանը Պարսկաստանից Հայաստանի տարածքով տարանցիկ ղեպի Վրաստան ուղևորվող բեռատարի գնման արդյունքում, հատուկ հարմարեցված թաքստոցում հայտնաբերվել է առանձնապես խոշոր չափերի՝ 927 կգ հերոին տեսակի թմրամիջոց: Նման քանակի թմրամիջոց տարածաշրջանում հայտնաբերվում է առաջին անգամ: ՀՀ Ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով, բեռ-

ցիկ ղեպի Վրաստան ուղևորվող բեռատարի գնման արդյունքում, հատուկ հարմարեցված թաքստոցում հայտնաբերվել է առանձնապես խոշոր չափերի՝ 927 կգ հերոին տեսակի թմրամիջոց: Նման քանակի թմրամիջոց տարածաշրջանում հայտնաբերվում է առաջին անգամ: ՀՀ Ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով, բեռ-

նատարի վարորդ 1953թ. ծնված Վրաստանի քաղաքացի Ավթանդիլ Մարտիաշվիլին ձերբակալվել է, իրականացվում են օպերատիվ-որոնողական աշխատանքներ՝ հանցագործության հետ առնչվող այլ անձանց հայտնաբերելու ուղղությամբ»: Հունվարի 20-ին ՀՀ ԱԱԾ մամուլի կենտրոնը տարածել է նոր հաղորդագրություն, որի մեջ մասնավորապես ասված է՝ «Ի լրումն նախկինում հայտարարված առանձնապես խոշոր չափերով՝ 927 կգ հերոինի մաքսանենգության դեպքի հայտնում ենք, որ 2014թ. հունվարի 18-ին ՀՀ ԱԱԾ կողմից ձեռնարկված օպերատիվ-որոնողական աշխատանքների արդյունքում Երեւան քաղաքում ձերբակալվել է Հայաստանի եւ Վրաստանի տարածքով տարանցիկ ղեպի թմրամիջոցի տեղափոխման կազմակերպիչներից, 1973թ. ծնված, Թուրքիայի քաղաքացի համդիսաղո Օսման Ուզուրլուն: Պարզվել է, որ բեռատար ավտոմեքենայի թափքում, թմրամիջոց տեղափոխելու նպատակով, դեռես ՇՆՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՑ 3

Համայնքների խոշորացման առաջին փորձը կարող է Մեղրիում կատարվել

Վ 1 ³ ñá³ í ³ ñ³ 1 ú³ 0ՇԿ


Մեղրին դիտվել է որպես ստրատեգիական կարևոր ուղղություն, աշխարհագրորեն, բնական պայմաններով ու ենթակառուցվածքներով՝ որպես ինքնամուկանակազմվող տարածք, խոշորացման տրամաբանությամբ՝ որպես համաչափելի մեկ համայնքի տարածք, եւ տեսակաճորեն առաջարկություն է եղել, ու քննարկվել է Մեղրու տարածաշրջանը մեկ խոշոր համայնք դարձնելու գաղափարը՝ իր մեջ ունենալով քաղաք Մեղրին, Ազարակը, հարակից բնակավայրերը: Այդ մասին հունվարի 15-ին ասել է տարածքային կառավարման փոխնախարար Վաչե Տերտերյանը՝ անդրադառնալով դիտարկմանը,

որ Մեղրու տարածաշրջանի բնակիչները դժգոհ են, որ Մեղրին, Ազարակը եւ տարածաշրջանի գյուղերը պետք է միավորվեն մեկ համայնքում, եւ պատրաստվում են բողոքի ակցիաներ անցկացնել:

Փոխնախարարը խոստացել է, որ երբ նախարարությունը հայտարարի, որ այդպիսի ծրագիր է մտադիր իրականացնել, ապա առաջինը տեղի բնակչությանը կհայտնեն, կզման, կքննարկեն:

«Ոչ մի բան առանց իրենց ցանկության չենք անելու, ոչ մի բան՝ առանց իրենց հետ քննարկելու: Եթե խոշորացման մասին է խոսքը, ինքնամասնատակ չէ այդ ամենը: Եթե մենք համոզ- ՇՆՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՑ 3





Ճակարենի 120 տնից միայն 40-ից է մնալն այս օրերին ծուխ բարձրանում: Ընդ որում՝ ծխացող օջախների զգալի մասում տարեց, միայնակ մարդիկ են բնակվում:

Ճակարեն. հարցերի հարցը խմելու ջուրն է

Վրձաժձձ Գձձ Նձձձ - ԿձձԱձձձ

բար, մեծ թիվ է կազմում տարեցների շրջանում, իսկ համեմատաբար երիտասարդ ընտանիքները լքում են գյուղը՝ այնտեղ ապրելու հեռանկար չտեսնելով: Համայնքի 120 տնից ծուխ է բարձրանում միայն 40-ից: Ընդ որում՝ ծխացող օջախների զգալի մասում տարեց, միայնակ մարդիկ են բնակվում: Անտառի փեշին է ծվարել գյուղն այդ, եւ բնակամբար հետաքրքրվում ենք, թե մարդիկ օգտվո՞ւն են անտառային բարիքներից: «Գյուղացին իր արտադրածի ձեռքին կրակն է ընկել, ի՞նչ պիտի անի վայրած պտուղներն ու մետապտուղները, - լինում է պատասխանը, - անտառից գյուղաբնակը կարողանում է իր վառելիքայտի հոգսը միայն հոգալ, անտառնունեությունն այնպիսի պայմաններ է դրել, որ վառելիքայտը միայն գրաստով են տեղափոխում»:

Համայնքի հարցերի հարցը խմելու եւ ոռոգման ջրի խնդիրն է: Սոսակա ջրաղբյուրը, որից կարելի է գյուղ խողովակաշարով ջուր հասցնել, չորս կիլոմետր հեռավորության վրա է: Հաշվարկել են, 37 միլիոն դրամ կպահանջվի հիմնախնդիրը լուծելու համար: «Երբ իմանում են, որ գյուղը սակավամարդ է, հրա-

ժարվում են ծրագիրը ֆինանսավորել», - բացատրում են մեր գրուցակիցները: Ընտանի կենդանիները եւս գյուղում իրենց ծարավը հագեցնելու կարգին տեղ չունեն: «Եթե գյուղն ապահովված չէ խմելու ջրով, ինչպե՞ս կարող են գյուղացու պահել գյուղում: Եթե գնաց էլ, միլիարդներ ներդնես, չես կարող նրան հետ վերադարձնել», - այս եզրահանգմանն են գալիս, լսելով դիմացինիդ՝ հիմնախնդրի մասին բացատրությունները:

Ճակատենցին կանգնել է անասնապահական մթերքները (միս, կաթ, մեղր) իրացնելու խնդրի առջև:



«Մի լիտր կաթը կես շիշ հանքային ջրի գնով չի վաճառվում, իսկ մսի վատ իրացումը բնակչության ցածր գնողունակությամբ է պայմանավորված: Այսօր գյուղաբնակը կրճատում է իր անասնազխաբանակը, այն դեպքում, երբ եկամտի 60 տոկոսը կաթի իրացումից պիտի ստանա: Նախկինում այս ծորի գյուղերում օրական հինգ-վեց տոննա կաթ էր արտադրվում, հիմա հազիվ 100-150 լիտր: Եթե մարդն օրական

2013-ի դեկտեմբերի 8-ին Կրեդիտ է ունեցել համայնքի ղեկավարի ընտրություն, անկուսակցական Անդրյուշա Դավթյանը (ձախից) յոթ ձայնով առաջ է անցել գործող գյուղապետ Արծրունի Հարությունյանից (ՀՀԿ)

երկու հազար դրամ եկամուտ ունենա, շահագրգռված կլինի կով պահել, - պատմում է նորընտիր գյուղապետ Անդրյուշա Դավթյանը, ուն



Գարոցում նշվեց բանակի օրը: Կրթօջախի տնօրեն Եղիշե Բաբայանը հավուր պատշաճի ներկայացրեց օրվա խորհուրդը, իսկ դպրոցականները հանդես եկան գրական-երաժշտական համարույթով:

տխուր ժառանգություն է բաժին ընկել, - գյուղացին ասես խռովել է հողից, - շարունակում է խորհրդածել համայնքի ղեկավարը, - մոտ 120 հա վարելահող ունի գյուղը, բայց համարյա ցանք չի կատարվում: Որոշ հողատարածություններ սկսել են ֆիակալել: Եվս մի բանի տարի, եւ դրանց տեղն անտառ է լինելու»:

Զրուցակիցներինս փոխանցմամբ՝ վերջին տեխնիկան գյուղում ստացվել է 1989 թվականին: Նախկինում վեց տարին մեկ գյուղը նոր տրակտոր էր մտնում, այժմ գյուղացու հույսը անհատ մեխանիզատորն է, որն էլ արտը վարելու իր գինն է սահմանել: Նրան էլ մեղադրել չի կարելի, ամեն մի պահեստամաս թանկ գնով է ձեռք բերվում: Եվ սրանով հողի մշակի տառապանքները չեն սահմանափակվում: Պետությունը էլիտար սերմացու էր հատկացրել մեկ/երկու հարաբերությամբ վերադարձնելու պայմանով: Տարին անբարենպաստ դուրս եկավ, երեք անգամ կարկտահարվեց հացահատիկի դաշտերը, հատկացված սերմացուն ցանողը փաստորեն միայն խոտ հնձեց, եւ հիմա կանգնած է սերմացուն վերադարձնելու (մաեւ դրամի տեսքով) խնդրի առջև: Եթե մեկի մոտ այդ գումարի չափը հասնում է 400 հազար դրամի, ապա...

Մեղրի-Ճավ-Կապան այլընտրանքային ճանապարհը գյուղի միջով է անցնում: Ճակատենցիների որոշ հողամասեր իրացվեցին ճանապարհաշինության նպատակով (ինչպես տեղեկացանք, երկու-երեք ընտանիք դեռեւս չի ստացել իրացված հողամասի դիմաց փոխհատուցումը): Վերակառուցված ճանապարհը որեւէ ձեւով անդրադարձավ գյուղական կյանքի վրա: Ճանապարհը վերակառուցելիս որոշ մարդիկ աշխատում էին դրա շինարարությունում: Այդքանը: Դրականն այն է, որ մարդկենտրոնի եւ Շիկահողի ենթաշրջանի գյուղերի հետ բարեկարգ ճանապարհ ունեցան:

Հոգու պարտք ենք համարում լինել գյուղի կրթօջախում: Ճակատենցի հիմնական դպրոցը 2011-ին տոնեց մեկդարյա հոբելյանը: Գյուղի ժողովրդագրական պատկերը չէր կարող բացասական անդրադարձ չունենալ կրթօջախի հաճախելիության վրա: Այժմ դպրոց յոթ աշակերտ է հաճախում: 2006 թվականից հետո պետությունն էր բարերարների ֆինանսական միջոցներով հիմնադրոգվել է դպրոցը, բարեկարգվել շրջակայքը: Այժմ դպրոցական շենքը թարմությամբ է շնչում, պատերին թեմատիկ վահանակներ եւ ուսուցողական նյութեր են, նաեւ կրթօջախի հիմնադիր Հովհաննես Դարախանյանի (1843-1908) մեծադիր նկարը: Նա նախանձախնդիր եղավ գյուղում ոչ միայն կրթօջախ հիմնադրել, այլեւ հինք դրեց արտադրության մի եկամտաբեր ճյուղի մետաքսագործությանը: Իր արտադրած մետաքսը ջրիներով տեղափոխում էր Թավրիզ՝ փոխանակում առաջին անհրաժեշտության ապրանքներով, գյուղատնտեսական գործիքներ ձեռք բերում, տեղափոխում հայրենի գյուղ՝ այդպիսով հոգալով չքավոր գյուղացիների կարիքները:

Ինչեւէ, մեր դպրոց այցելած օրը նշվում էր բանակի օրը: Նախ՝ կրթօջախի տնօրեն Եղիշե Բաբայանը հավուր պատշաճի ներկայացրեց օրվա խորհուրդը, ապա դպրոցականները հանդես եկան գրական-երաժշտական համարույթով: Կրթօջախի տնօրենը, ով պաշտոնավարում է 1994-ից, համոզմունք է հայտնում, որ հնարավոր ամեն ինչ անելու է, որ չգոցվեն դպրոցի դռները:

Հրաժեշտից առաջ նորընտիր համայնքապետն ասաց, որ ամեն գնով ջանալու է խմելու ջրի հիմնախնդիրը լուծել, մի բան, որ Ճակատենցիների վաղեմի երազանքն է:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

ՃàóÙì ² ÐÆ 28-À` Ð² Úàò ´ ² Û² Î Æ úð



Երբեք չպետք է բավարարվել ձեռք բերվածով...

ՕՇ³ Ǿ Ǿ³ չ
×BÙ³ ñì áñ»Ý Û»ÍÁ, áñÁ
Û»Í ½³ í ³ Ǿ³ չ Ǿ³ Ë`
Շñ ÁáÐáí ñ¹ Ç »ð³ á³`
Û³ ñ¹ Ǿ³ ÁáÐ³ Ý:
Գարեգին Նդդեհ

«Երբեք չպետք է բավարարվել նվաճած հաղթանակով...»։ սա սկզբունք հայտարարած անհատների կյանքի ընթացքին շատ հաճախ հետետեում ենք անխոս, առանց ավելորդ պերճախոսությունների։ Բայց գալիս է մի պահ, երբ կանգ ենք առնում, փորձում արժեւորել նրանց անցած ուղին, դասեր քաղել, նրանց արժանի հետնորդը դառնալ։

Արդեն երկար տարիներ Կապանի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանը, որ, հատելով կյանքի կես ճանապարհը, երբեք չի հեռացել հայրենիքի հզորության ու բարօրության համար մարտնչելու ճշմարիտ ուղուց, իր զինվորներին տվել անփոխարինելի զենք՝ հրամանատարի անձնական օրինակ՝ նրանց ներշնչելով համարձակություն, խիզախություն եւ անկոտրում կամք։

20-րդ դարավերջին սկսված հայ-ադրբեջանական ընդհարումները, որոնք վերաճեցին պատերազմի, շատերին ստիպեցին ոտքի կանգնել՝ հայրենիքի զոհասեղանին ղնելով իրենց կյանքը։ Նորանկախ Հայաստանի Հանրապետության համար այդ դժվարին ժամանակների նվիրյալներից է Լեոնիդ Գրիգորյանը, ով, թողնելով Լենինգրադում զինվորական ծառայությունը, ապահով կյանքը, եկավ հայրենի Կապան քաղաք, որպեսզի իր ռազմական գիտելիքներն ու զինվորական պատրաստվածությունը ներդնի Արցախի ազատագրման եւ ազգային բանակի ստեղծման գործում։

1991թ. նոյեմբերի 1-ին ՀՀ մի-



2013թ. հոկտեմբեր, Կապան. Կապանի զինկոմ Լեոնիդ Գրիգորյանը, Սուրազ Սարգսյանը, Միքայել Գրիգորյանը, Վլադիմիր Հայրապետյանը

նիստրների խորհրդի որոշմամբ Ներքին գործերի նախարարության Կապանի պահպանության բաժնին կից կազմավորվեց այլընտրանքային հրաձգային գումարտակ՝ 120 զինվորից բաղկացած, որի դասակի հրամանատար նշանակվեց Լեոնիդ Գրիգորյանը։ Գումարտակը ՀՀ-ում առաջին անգամ կազմակերպեց 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիների առաջին գորակոչը։ 1993թ. հունիսի 1-ին լեյտենանտ Լեոնիդ Գրիգորյանը տեղափոխվեց 97-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադի 1-ին գումարտակի շտաբի պետի տեղակալ, մույն թվականի հոկտեմբերի 1-ից՝ գումարտակի հրամանատար։ Այդ տարիներին գումարտակը կազմա-

վորվեց ու կայացավ, մասնակցեց ՀՀ հարավարեւելյան սահմանների պաշտպանության մարտական գործողություններին։

Անցել են տարիներ, եւ տարիների հեռավորությունից գումարտակի նախկին հրամանատարը հպարտությամբ է հիշում ծառայած տարիների, ընկերների թափած արյան եւ թանկ գնով վաստակած հաղթանակների մասին. «Երբեք չեն մոռացել եւ չեն մոռանա իմ զոհված ընկերներին ու իմ պարտքը նրանց ծնողների հանդեպ։ Ինչ վերաբերում է ողջ մնացած իմ զինակից ընկերներին, իմ հնարավորության սահմաններում մշտապես փորձում եմ արժեւորել նրանց գործը, մեծարել ու պատվոգրել,

մեղավորների, շնորհակալագրերի ներկայացնել։ Միայն ցավում եմ, որ մեր օրերում խաղաղության մասին պատմողներն ավելի շատ տիտղոսների են արժանացել, քան խաղաղություն բերողները»։

Խոսելով պատերազմական գործողություններից՝ Լ.Գրիգորյանը հատկապես առանձնակի հպարտությամբ է հիշում 1992թ. Ներքին Հանդի պաշտպանությունը, որտեղից թշնամու հավանական ճեղքում էր սպասվում, եւ որը, սակայն, հրամանատարական վարպետության, արագ կողմնորոշվելու շնորհիվ կասեցվեց՝ ապահովելով գյուղի լիակատար պաշտպանվածությունը։

1994թ. հունվարից 97-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադի առաջին գումարտակը տեղափոխվեց մարտական գործողությունների գոտի։ Լ.Գրիգորյանի որոշմամբ՝ զինվորները, ովքեր ընդամենը 1-2 ամսվա մարտական փորձ ունեին, ռազմական գործողությունների մեջ պետք է մտնեին միայն կամավորության սկզբունքով։ Չեղավ գեթ մեկը, որ առաջին գծում հայտնվելու ցանկություն չհայտնեի։ Շնորհիվ մարտական ոգու, հայրենիքին անմնացորդ նվիրվելու պատրաստակամության գումարտակը տրված մարտական առաջադրանքը կատարեց փառքով՝ այս պատերազմում հաղթանակ ձեռք բերելու գործում ունենալով նշանակալի ներդրում։

Հերթական մարտական առաջադրանքը կատարելիս թշնամու սկանի պայթյունը խլացրեց Լ.Գրիգորյանի հրամանը, ով այդ անակնկալ պահին իրեն մոտ կանգնած զինվորներին սեփական մարմնով ծածկելով փրկեց։ Չարաբաստիկ ականը պայթեց Լ.Գրիգորյանից մոտ 1-1.5մ հեռավորության վրա։ Հրամանատարը պայթած արկից ծանր վիրավորվեց՝ ստանալով բեկորային բազմաթիվ վնասվածքներ եւ կոնտուզիա։ Լ.Գրիգորյանին արնաշաղախ վիճակում զինվորական բաժնի մեջ փաթաթած՝ մարտի դաշտից դուրս բերեցին այն զինվորները, որոնց կյանքը փրկել էր։ Գեներալ-լեյտենանտ Միքայել Գրիգորյանը պատմում է, որ մարտից հետո բուժվեց հերթական այցելուության ժամանակ, երբ մոտեցավ վիրավոր զինվորներից մեկին, վերջինս պատասխանեց, որ ինքը կոհիմանա, բայց իր հրամանատարի վիճակն ավելի ծանր է, եւ առաջին հերթին նրան է բուժօգնություն հարկավոր։ Ազատամարտիկ, ավագ լեյտենանտ Մելանյա Գեւորգյանը պատմում է. «Լ.Գրիգորյանի հետ վիրավորված զինվորները բարձրաձայն գոչում էին. «Մենք՝ ոչինչ, հրամանատարի կյանքը փրկեք»։ Իսկ անգիտակից վիճակից մի պահ դուրս գալով՝ հրամանատարն էլ պահանջում էր, որ իրեն տանեն դիրքեր, քանի որ չի կարող զինվորներին մենակ թողնել»։ Բայց վերջերս խորն էին, եւ երկարատեւ բուժում էր հարկավոր։ Երկու ամիս բուժվելուց հետո Լ.Գրիգորյանը հենակներով նորից վերադարձավ մարտի դաշտ՝ շարունակելու իր սրբազան գործը։

Ճիշտ է, պատերազմը խլում է ամեն ինչ, բայց փոխարենը տալիս է միայն հաղթողի հպարտության զգացում եւ ազգիդ պիտանի լինելու հաճելի զգացողություն, եթե, իհարկե, բախտը ժպտում է։ Թերեւս, զինվորական հմտության շնորհիվ էր, որ գումարտակը, որտեղ մեծ մասամբ ծառայում էին 18 տարին Մոր բոլորած զինվորներ, քիչ կորուստներ տվեց։ Հպարտության զգացումն առավել քան բարձր է, քանզի մա հայոց բանակի ակունքներում կանգնած սպաներից մեկն է, որի վառ ապացույցը սպարապետ Վազգեն Սարգսյանի՝ գումարտակին տված զնահատականն է. «Դեռ հրաման չարձակած՝ արդեն կայացած բանակ ունենք»։

